

ՓՈՋԱԼՔՆԵՐԱԿԱՆ ԽՈՍՓՐ ԵՎ ԱՌԱԿՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ԳՐԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Ս. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրիգոր Տաթևացու մեծածավալ գրական ժառանգությունը հայ միջնադարյան մտքի յուրօրինակ հանրագիտարան է: Ի մի բերելով գիտական մտքի նախորդ նվաճումները, Տաթևացին փորձել է մատչելի մատուցել դրանք և դիմել է ասվածը հասկանալի, գրավիչ ու հետաքրքիր դարձնելու մի շարք միջոցների: Նրա երեք տասնյակի շափ աշխատությունները լի են պատկերավոր արտահայտություններով, համեմատություններով, դարձվածքներով, թեմայով խոսքերով: Նա հաճախ է վերլուծել հատկապես փոխաբերությունը, ընդ որում թե՛ սա, թե՛ ալլաբանությունը և թե՛ առակը միավորել է «առակաւոր բան» կամ «առակաւոր խօսք» անվանմամբ՝ նկատի ունենալով դրանց ընդհանրությունը, այսինքն՝ փոխաբերական նշանակությունը և արժեքը:

Փոխաբերական խոսքում նա տարբերում է երկու մակարդակ. բնական և բարոյական: Առաջինը խոսքի ուղղակի իմաստն է, երկրորդը՝ փոխաբերականը: Օրինակ, «աչքն իմաստնոյն ի գլուխ իւր» արտահայտության բնական չիմքն ըստ նրա այն է, որ աչքը գտնվում է գլխի վրա: Սակայն խոսքն այստեղ այդ ուղղակի իմաստի մասին չէ. «ղի ոչ զայս զգալի աչացն ասէ և ոչ զմարմնական գլխոյս, զի ահա ցուցաւ, որ ամենեցուն աչք ի գլուխն է եղեալ, այլ զիմանալի աչաց և զիմանալի գլխոյն է բանս»¹: Խոսքն ընկալելու և հասկանալու խորություն մասին է: Սա էլ հենց արտահայտության «բարոյական», այսինքն՝ փոխաբերական նշանակությունն է:

Տաթևացու կարծիքով բառի, արտահայտության փոխաբերական ընկալումը ժամանակագրորեն միշտ հաջորդում է նրա ուղղակի նշանակությանը, այլ կերպ ասած, ըստ նրա «բարոյական» նշանակությունը հիմնված է «բնականի» վրա: Այստեղ նշանակություն ունի նաև սովորութի ուժը: Նա օրինակ է բերում իր օրերում ընդունված «տուն ունի» (կին ունե՞ս նշանակությամբ) արտահայտությունը: Վերջինիս առաջացման համար էական դեր է խաղացել կնոջ դերը տնտեսության մեջ. «կինն է ժողովումն և հաւաքումն մարդոյն և ընչիցն, զի մարդն է որպէս գետ և կինն որպէս ծով, առ իր շողովին գետք... զկինն շինուած կոչէ աստուծոյ, զի առաւել կնոջ անէր է տալն և տալն շինութիւն կինն է»²: Այս ընդհանրացման շնորհիվ առաջացել է ալլաբերական հասկացության համատեղման սովորությունը. «Զայս սովորութիւն կալան այժմ և կոչեն զկինն տուն. տուն ունի՞ս, տուն առեալ էս»³ (որ նշանակում է՝ կին ունե՞ս, ամուսնացե՞լ ես):

Դա խորեւ փոխաբերական խոսքի առաջացման պատճառ նշում է նաև երկու երևույթների, առարկաների նմանությունը կամ նույնատիպ հատկանիշներով օժտված լինելը: Բերենք մի օրինակ, որ հատուկ է հատկապես միջնադարյան մտածողությանը և առաջին հայացքից կարող է անսովոր թվալ: Խոսքը սատանային արեգակ անվանելու մասին է: Պատճառն ըստ Տաթևացու, երկուսի նմանությունն է. «արեգակն առաւել ջերմով և երբեմն պա-

¹ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ձմեռան (այսուհետև՝ Ձմեռան), Կ. Պոլս, 1740, էջ 190:

² Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան (այսուհետև՝ Ամարան), Կ. Պոլս, 1741, էջ 196:

³ Նույն տեղում:

կաս՝ վնասէ... այսպէս և սատանայ շերմացեալ ի սէր աշխարհիս, ցրտացեալ ի սիրոյն աստուծոյ՝ վնասէ⁴։ Միաժամանակ, նույն երեւոյթի ներհակ բնույթը հնարավորութիւն է տալիս և՛ բարու, և՛ չարի այլաբանական խորհրդանշը արտահայտել նույն բառով։ Այսպես՝ խմորի օրինակով բացատրելով թե՛ աղանդավորութեան վնասները, թե՛ արքայութիւնը՝ Տաթևացին հետևյալ կերպ է մեկնաբանում դա. «Վասն է՞ր խմորն երբեմն չարութեան և աղանդոյ օրինակի և երբեմն՝ արքայութեան։ Նախ զի ունի զօրութիւն և ունի ապականութիւն, ընդ զօրութեան բարոյն բաղդատի և ընդ ապականութեան՝ չարին»⁵։

Այլաբանական խորհրդանշի ընտրութեան համար կարևոր պայմանը դրա՝ կենսափորձով հաստատված և իր հատկանիշներով դիտարկված լինելն է։ Ուստի «առակաւոր խօսքի» օրինակը միշտ չընտանի և ծանօթ է ամենեցուն⁶։

Այս բոլոր բացատրութիւնների հետ միաժամանակ Տաթևացին բազմիցս զգուշացնում է, որ փոխաբերական խոսքը չպետք է հասկանալ բացառապէս։ Անհեթեթութիւն կլինի կարծել, թե առաջին եկեր զմարմին իւր» նշանակում է, թե անմիտ մեկը կերել է իր մարմինը. «ոչ թէ զայն ստուգէ բանս, թէ մարդ զիւր մարմին ուտէ, այլ օրինակաւ ցուցանէ զբանս թէ որպէս հարեալն ի դիւէ կատաղի և զմարմին իւր ուտէ»⁷։

Փոխաբերական խոսքի տեսական լավ իմացութիւնը Տաթևացին զուգակցել է դրա հմուտ, բազմաբնույթ կիրառութիւններով։ Ընդ որում պետք է նշել, որ դրանք, ինչպես և ծավալուն համեմատութիւնները նրա աշխատութիւններում շատ հաճախ միայն ձևականորեն են տարբերվում առակից՝ շունենալով ավարտուն տեսք։ Այսպես՝ խորապես համոզված լինելով, որ հայ ժողովրդի գոյատևման միակ հուսալի պայմանը միաբանութիւնն է՝ նա հետևյալ օրինակն է բերում. «որպէս տերեքն ի վերայ ծառոյն ամբացեալք ի նմա առնուն զբնական հիւթն և կանաչանան գեղով և հովանի արծակեն յինքեանց։ Եւ երբ թօթափին ի ծառոյն՝ չորանան և տգեղանան և լինին կոխան և կորնշին»⁸։ Իսկ երկրի տերերին խորհուրդ տալով իմաստութիւն ցուցաբերել ժողովրդին առաջնորդելու հարցում՝ գրում է. «նոյնպէս մեծ ջան և իմաստութիւն պարտի ունիլ իշխանին՝ որ զերկիրն ի շինութեան պահէ և զամենայն ի յիւր տեղին կառաւարէ, զոր օրինակ՝ թագաւորն տայ ի մարդ մի բազում և ազգի ազգի կենդանիս, զի պահեսցէ, որ մինն լինի ընտակեր և միւսն՝ մսակեր, այլքն խոտակերք կամ հացակերք, իւրաքանչիւրոցն պիտոյ է զիւր կերակուրն տալ և ապա ապրին նոքա։ Ապա թէ ընտակերին միս տայ և առիծուն՝ ունտ, տգիտութիւն է և ոչ ապրին կենդանիք։ Վասն որոյ աղայեմք՝ իմաստութեամբ հովուել զսեփհական ժողովուրդս»⁹։ Ինչպես նկատելի է, հատվածն իսկապես ունի առակի արժեք։ Բերենք այսօրինակ մի քանի այլ փոխաբերական համեմատութիւններ, որոնք նույնիսկ իրենց բովանդակութեամբ համապատասխան կարելի է վերնագրել. «Զորօրինակ ի խաւարի բանտարգեալ լինին մինն ի ծննդենէ կոյր և միւսն տեսեալ զլոյս։ Արդ որ ի ծնէ կոյրն է, անհոգ է, զի անընդակից է խաւարին։ Իսկ որ զլուսն ունի՝ յերեք կողմանէ ծանրանայ։ Նախ զի յիշէ զբարութիւն լուսոյն. ուստի զրկեցաւ Երկրորդ տառապանք խաւարին ի ներկայն։ Երրորդ՝ յոյս ունի տեսնել զլոյսն և յապաղիլն տանջի»¹⁰։ Կամ՝ «Եւ յի՞նչ պատճառաւ զո-

⁴ Նույն տեղում, էջ 392։

⁵ Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի [Մաշտոցի անվան Մատենադարան, (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 1264, էջ 194 բ]։

⁶ Նույն տեղում։

⁷ Ամարան, էջ 248։

⁸ Նույն տեղում, էջ 423։

⁹ Նույն տեղում, էջ 425։

¹⁰ Մատենադարան, ձեռ. № 1264, էջ 75 բ։

յանա, աղմուկ. ո՛չ ապաքէն յինքնասէր բարուց և ազահութեանց... Այլև վասն սորա են կոխք և ատելութիւնք, սպանութիւնք և այլն: Տես առ շաղղակեր կենդանիս, որ զշաղղին ունի՝ յամենեցունց խածանի: Տես և ի թռչունս, որքան ի ծառս և ընդ երկինս թռչին, ոչ վնասին, այլ յորժամ յերկրի վասն որկորոյ և կերակրոյ քնակին ի ծողակս ըմբոնին և ձկունք ի խայծ կարթին»¹¹,

Տաթևացին «առականոր խօսքի» մեջ դասում է նաև դիմառնությունը (առականների, կենդանիների, երկույթների անձնավորումը): Սա ըստ նրա նույնպես փոխարերական արժեք ունի՝ «նոյնով զայլ ուսուցանեն»¹²: Ընդ որում յուրաքանչյուր կենդանի մարդկային որևէ հատկանիշի կրող է հանգես գալիս. «Ջանազան մեղքն կերպարան առնէ զմարդն, որպէս ազահն՝ զգայլուն, ցանկասէրն՝ խոզի, խարօղն՝ աղուէսի և գողն՝ մուկ, ծոյլն՝ էջ և բարկացողն՝ շուն, խորամանկն՝ ուղտ և հպարտքն՝ քաղաղ»¹³:

Տաթևացին բարձր է գնահատել «առականոր խօսքի» դերը: Եթե Արիստոտելը փոխարերության գործածությունը դիտում էր իբրև տաղանդի նշան, ապա ըստ Տաթևացու դրա հասկանալը նույնպես մատչելի չէ բոլորին. «յաւարժանից ծածկեալ (է)»¹⁴: Նա «առականոր խօսքը» համեմատում է սանդուղքի հետ, որով «միտք մարդոյն ի վեր ելանէր»¹⁵: Այն օգնում է նաև ամբողջական սովորածը. «Առանց օրինակի բանն շուտ գնայ, բայց գեղեցիկ օրինակաւ հաստատ մնայ»¹⁶: Նրա կարծիքով «առականոր խօսքը» բացառիկ արժեք ունի Սուրբ գրքում. «զպայծառութիւն արեգական հայելով տեսանեմք ...նոյնպէս ի պայծառ լոյս աւետարանին՝ առականոր բանիւք»¹⁷: Նա հաճախ է վերլուծում այստեղ տեղ գտած առակները, որոնք նրա ինքնատիպ մեկնաբանությունների շնորհիվ նոր հնչեղություն են ձեռք բերել: Այսպես, օրինակ, քննադատելով նրանց, ովքեր առանց պատասխանատվության պաշտոններ են զբաղեցնում և գտնում, որ արժանի են դեկավարելու ժողովրդին, բերում է Աստվածաշնչի հայտնի առակը («Գնացին ծառքն օծանել իւրեանց թագաւոր») և մեկնաբանում. «Այլ յայսմ ժամանակի, որք արժանի են առաջնորդութեան՝ չառնուն յանձն, այլ փախչին, իսկ անարժանքն յառաջ մատչին»¹⁸:

Նա հաճախ է իբրև օրինակ բերում նաև Վարդան Այգեկցու առակները, որոնք վաղուց ժողովրդի սեփականությունն էին դարձել: Դիմելով դրանց, նա իրականացնում է իր իսկ սկզբունքը. խոսքը պարզաբանել մատչելի, ծանոթ օրինակներով, և պատահական չէ, որ այդ առակները տեղ են գտել հատկապես նրա «Գիրք քարոզութեան» երկու հատորներում: Նա բերում է Այգեկցու «Գեղեցիկ կին և սեաւ որդին», «Տխուր թագաւոր», «Խոստովանութիւն մարդասպանի», «Նախանձ» առակները: Մի կողմ թողնելով դրանցից մի քանիսի («Սիրելի», «Որպէս նորոգի արծիւ», «Վասն թռչնոց որ կռչի փիւնիկս») առաքանական մեկնաբանությունները, Տաթևացին դրանք մատուցում է իբրև քարոզ:

Գալով Տաթևացու առակներին ու զրույցներին, պետք է նշել, որ դրանց նպատակը նույնպես եղել է բարության, ազնվության, իմաստության ու խելամտության դրվատումը, չարի, խարեության խարազանումը, մի բան, որ թելադրվում էր նրա գրական ողջ ժառանգության գաղափարական ուղղվա-

11 Զմերան, էջ 119:

12 Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն սաղմոսաց (Մատենադարան, ձեռ. № 5869, էջ 39 ա):

13 Մատենադարան, ձեռ. № 1264, էջ 233 բ:

14 Գրիգոր Տաթևացի, Լուծումնք առակաց (Մատենադարան, ձեռ. № 5869, էջ 324 բ):

15 Զմերան, էջ 376:

16 Նույն տեղում:

17 Մատենադարան, ձեռ. № 1264, էջ 192 ա:

18 Զմերան, էջ 285:

ծովայամբ: Նա իր աշխատությունների բազմաթիվ էջերում առանց վարանելու և երկնչելու սուր քննադատության է ենթարկում կաշառակեր դատավորներին, հարստահարող իշխաններին, վաշխառուներին, եպիսկոպոսներին, որոնք դնում են իրենց պաշտոնը՝ եկամտի աղբյուր դարձնելով այն իրենց համար: Նա նույնիսկ հակված է կարծելու, որ ժողովրդի ճակատագիրը որոշվում է նաև առաջնորդների մտածելակերպով և գործունեությամբ, որն ակնհայտ է հետևյալ օրինակից. «Հոսմեյացուց թագաւորն ... ծայր յամենայն աւուր ի խորհուրդ նստէին և նոցա համաձայնութեամբ զիշխանութիւն վարէին, վասն որոյ մնաց թագաւորութիւն հաստատ և տիրեն մինչև ցայսօր: Եւ մերս առաջնորդք և իշխանք հոգեւոր կամ մարմնաւոր որք ինքն-իշխանութեամբ կատարեն զգործն առանց խորհրդակցի, վասն որոյ բարձեալ է իշխանութիւն և աւերեալ երկիրն և տարագրեալ են ժողովուրդք մեր ի վերայ երկրի և ցրուեալ յամենայն ազգս»¹⁹, Ուստի պատահական չէ, որ նրա առակաները և քարոզները երբեմն գրեթե նույնանում են բովանդակությամբ. «Թագաւոր մի որ իշխէր տասն թագաւորաց՝ յորժամ եհաս օր մահուն նորա, հրամայեաց զպատանս իւր կապել ի ձող մի երկայն և շրջիլ ընդ քաղաքն և ասել բարձր ձայնիւ, յամենայն թագաւորութենէն զոր ունէր արքայ՝ զայս շափ ինչ տանի ընդ իւր»²⁰:

Նույնն է հավաստում նաև նրա քարոզը. «Ուրպէս գրեմք ի գերեզմանի և յիշեմք, թէ այս է այսանուն մարդ ահարկու կամ իշխան կամ փառաւորն որ եղեալ է՝ յայս գերեզմանս և ոչինչ ավելի քան զմիւս աղքատն կամ զանպատին»²¹:

Մարդկային հատկանիշներից Տաթևացին հատկապես բարձր է դասում գթասրտությունը, ողորմածությունը և բարությունը (սեւ չիք այլ առաքինութիւն որ մարդն աստուծոյ նման առնէ քան ղողորմութիւն. ղի ոչ աղքատութիւն և ոչ հեզութիւն և ոչ սուգ կամ պահք, որ է քաղց և ծարաւ կամ աղօթք սուրբ կամ շարշարանք, այլ միայն ողորմածութիւն նման առնէ աստուծոյ»²², որոնք նրա կարծիքով ի վերջոյ փոխհատուցվում են. «էր ոմն ճարտար բժիշկ և ոչ ինչ վաստակէր յիւր երկիրն, զի չկայր անդ հիւանդ. վասն աչն զնաց յայլ երկիր ուր լրագում կայր հիւանդ: Եւ զառաջինն ետես անդ հիւանդ մի, զոր կամեցաւ իւր խարճովն առողջացուցանել՝ զի մեծացի անուն նորա և բազում վաստակս արասցէ և արար այնպէս: Եւ կացեալ անդ ժամանակս ինչ՝ բազում վաստակ արար: Եւ կայր հիւանդ մի այլ ընդհանուր և յորժամ կամեցաւ երթալ յաշխարհ իւր՝ զայն հիւանդն ևս բժշկեաց իւր խարճովն, զի յորժամ երթիցէ՝ յիշեսցեն զանուն նորա և արար այնպէս»²³:

Ինչպես նշել ենք, Տաթևացին համարձակ քննադատության է ենթարկում նաև հոգևոր դասի ներկայացուցիչներին, եթե նրանց գործունեությունը չի բխում ժողովրդի շահերից: Նա սրտմտությամբ է գրում, որ անցել են այն ժամանակները, երբ հոգևորականը մարտիրոսանում էր (սլաւոնական ժամանակն այն և եպիսկոպոսն ոչ մարտիրոսանայ, այլ հարուստ և փարթա՞մ ապրի»²⁴): Ահա և նրա առակը եկեղեցու նվիրատվությունները գողացող քահանաների մասին. «էր կուռք մի բարիլացուց, որ կոչէին Բէլ և տային նմա ոտճիկ յօրն քառասուն ոչխար և բազում նաշիւ և գինի մատուցանէին և քահանայքն խաբէին զժողովուրդն, թէ աստուածն ուտէ զամենայն ինչ զորդնեն նմա զոհ և ինքեանք և որդիք և կանայք իւրեանց ուտէին: Եւ յաւուր միում մարգարէն Դանիէլ ցանեաց մոխիր ի տաճարին և յորժամ բացին՝ զդուռն, տեսին զոտնահետսն և բարկացեալ թագաւորն եսպան զնուս և զԲէլ եղ ի ձեռս Դանիէլի և կործանեաց զնա:

¹⁹ Ամարան, էջ 424:

²⁰ Նույն տեղում, էջ 595:

²¹ Զմերան, էջ 268:

²² Մատենադարան, ձեռ. № 1264, էջ 79 ր:

²³ Զմերան, էջ 72:

²⁴ Նույն տեղում, էջ 291:

Այսպէս առնեն չար քահանայքն զոր ինչ բերեն ժողովուրդքն նուէրս ի զարդարանս եկեղեցւոյ՝ դողացեալ առնեն զարդ ուստերաց և դստերաց իւրեանց»²⁵։ Քրիստոնեական բարեպաշտութիւնն ու հավատն է դրվատում Պա իր հետևյալ առակում. «Որպէս այն ծերն ուր ընդ հրեշտակին գնայր և շաղիղ հոտեալ ետես և ոչ գարշեցաւ. յորժամ ետես զպոռնիկ երիտասարդն, գարշեցաւ և դարձոյց երեսն։ Եւ յորժամ եհարց ծերն զպատճառն, ասէ. Երպէս հոտած մարմինն այն ձեզ է գարշելի, նոյնպէս հոտ պոռնկութեան ձեզ է գարշելի»²⁶։

Այս առակներից բացի Տաթևացին ունի նաև մի ավանդութիւն Գրիգոր Լուսավորչի մասին, իսկ «Վասն աթոռոյն Աղթամարայ» աշխատության մեջ բերում է իր տեսիլքի նկարագրութիւնը։ Վերջինս ուշագրավ է նախ միջնա-գարյան մտածողության առումով և երկրորդ՝ կապված է Տաթևացու կարևորագույն ձեռնարկումներից մեկի՝ հայոց կաթողիկոսական աթոռի միավորելու հարցի հետ։ Բացատրելով, թե ինչու հատկապես ինքն է ձեռնամուխ եղել այդ քայլին, նա մի շարք իրական պատճառաբանումների կողքին նշում է նաև, որ այն թելադրվել է գիշերվա իր տեսիլքով, ըստ որի երեք այրեր են եկել՝ «կապեալ ոտիւք և ձեռք. հարցանեմ թէ՛ ով եք դուք և ասեն՝ Գեք եմք. Եղիա, Եղիշէ և Եղիազար... մեք առաջնորդ եմք Աղթամարայ և խնդրեմք ի քէն, զի զոր ինչ յերեկ խորհեցայք՝ մի յապաղէր և մոռանար։ ...Արձակել տուր զմեզ ի կապանաց անիծից, որ ի վերայ մեր»²⁷։ Նշենք, որ հայոց կաթողիկոսական աթոռը երկպառակված էր 1114 թվականից, և Աղթամարի հակաթոռ կաթողիկոսութիւնը, ինչպես և նրա տարածքի բնակիչները գտնվում էին «կապանաց անիծից», այսինքն՝ նզովքի ներքո։ Տեսիլքի սրբերի կապանքները դրա այլաբանական խորհրդանշին են։

Այսպիսով, բազմաթիվ համեմատութիւնները, փոխաբերութիւնները և առակները հետաքրքիր ու կենդանի են դարձրել Տաթևացու խոսքը։ Նա հոգացել է, որ իր գրական ժառանգութիւնը դառնա ընթերցողի սեփականութիւնը, ուստի և դիմել է խոսքը, ինչպես ինքն է ասում՝ «հեշտալուր» դարձնելու բազմաթիվ միջոցներով։

МЕТАФОРА И ПРИТЧИ В ЛИТЕРАТУРНОМ НАСЛЕДИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ

С. М. ГРИГОРЯН

Резюме

Литературное наследие Григора Татеваци является своеобразной энциклопедией средневековой армянской мысли. Обобщая прежние достижения научной мысли. Татеваци заботился о том, чтобы его труды были понятны читателю и преподносил сказанное различными доступными, ясными и одновременно интересными средствами: крылатыми словами, сравнениями, афоризмами, пословицами, поговорками, метафорами, притчами и т. д.

Григор Татеваци часто обращался к метафоре и высоко ценил ее роль. Если Аристотель видел в ее применении признак таланта, то Татеваци считал, что ее понимание не всем доступно.

²⁵ Տճերան, էջ 285,

²⁶ Նույն տեղում, էջ 385:

²⁷ Գրիգոր Տաթևացի, Վասն աթոռոյն Աղթամարայ (Մատենադարան, ձեռ. № 9622, էջ 663):

Что касается притч Григора Татеваци, то их цель—восхваление доброты, честности, мудрости и бичевание зла и лжи, что было продиктовано идейной направленностью всего его литературного творчества.

METAPHORS AND PARABLES IN GRIGOR TATEVATSI'S LITERARY LEGACY

GRIGORIAN S. M.

S u m m a r y

Grigor Tatevatsi's literary legacy is a peculiar encyclopedia of medieval Armenian thought. Generalizing former achievements of scientific thought, Tatevatsi took care that his work should be comprehensible to his reader, so he presented the statements through various available, clear and at the same time entertaining means: soaring words, comparisons, aphorisms, proverbs, sayings, metaphors, parables and so on.

One of his favourite means is the metaphor. Grigor Tatevatsi often resorts to it and highly appreciates its role. While Aristotle saw the sign of talent in its application, Tatevatsi considered its comprehension not accessible to everybody.

As regards Grigor Tatevatsi's parables, their aim is to praise kindness, honesty and wisdom, and to castigate evil and falsehood, principally dictated by the ideological orientation of his entire literary works.